ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի առաջարկությունները «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների օրենսդրության վերաբերյալ

1. Օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով կարգավորել "հատուկ կամ բացառիկ իրավունք" (տես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 2 մաս 1 կետ 15) կոնցեպցիան, որպեսզի դրա օգտագործմամբ չչարաշահվեն մեկ անձից կամ հանրային կազմակերպություններից գնումները:
2. Որպես գնումների լիազորված մարմնի գործառույթ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք հոդված 16-ում ներառել նաև գնումների վիճակագրության հավաքագրումը և հրապարակումը՝ եռամսյակային պարբերականությամբ:
3. Գնումների տեղեկագրում հրապարակել Հոդված 6-ի մաս 1-ի 3 և 4 կետերով սահմանված անձանց ցուցակը՝ լրացնելով համապատասխան նախադասություն նշված կետերում:
4. Նախատեսել, որ գնման բոլոր տեսակի ընթացակարգերի բոլոր մասնակիցների անունները հայտնի լինեն հանրությանը և լրատվամիջոցներին՝ նախքան նրանց հետ պայմանագրի կնքումը: Դա կտա լրացուցիչ հնարավորություն՝ բացահայտելու այն մասնակիցներին, որոնք նախկինում կամ թաքցրել են, որ իրենք չարաշահել են իրենց գերիշխող դիրքը կամ էլ եկել են հակամրցակցային համաձայնության, ինչպես նաև մասնակիցների իրական սեփականատերերին:
5. Միջնորդավորված գնումները սահմանափակելու նպատակով Օրենքի Հոդված 6-ի 5-րդ մասի նախադասության վերջում ավելացնել "պայմանով, որ մասնակցի մասնագիտական գործունեությունը համապատասխանում է պայմանագրով նախատեսված գործունեությանը և նա ունի համապատասխան մասնագիտական փորձառություն":
6. Պարտավորեցնել լիազորված մարմնին ներկայացնել ոչ միայն պետական գնումների տարեկան, այլ նաև եռամսյակային հաշվետվություններ՝ լրացնելով Հոդված 16-ի մաս 2-ի 7-րդ կետի ա/ ենթակետը համապատասխան արտահայտությամբ:
7. Հոդված 10-ի մաս 3-ում հանել "առնվազն" բառը՝ դրանով վերացնելով անգործության ժամկետի հարցում կամայականության հնարավորությունը:
8. Գնումների վերաբերյալ վիճակագրության մեջ առանձին բաժնով հրապարակել այն պայմանագրերի թիվը, որոնք կատարվելու են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում՝ ներկայացնելով նաև այդ թվերն ըստ պատվիրատուների:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

9. Գնումների լիազորված մարմնի գործառույթներում (տես Հոդված 16, մաս 2) նախատեսել նաև վճարովի կամ անվճար խորհրդատվության տրամադրում:

10. Հոդված 2-ում կամ ենթաօրենսդրական ակտով սահմանել պետություն-մասնավոր գործընկերությունը, հավատարմագրային կառավարումը և կոնցեսիան:

11. Հոդված 26-ում ֆիքսել գնահատող հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը:

12. Հոդված 41-ի մաս 5-ում "անհապաղ" բառի փոխարեն դնել կոնկրետ ժամանակահատված:

13. Հոդված 50-ով Գնումների բողոքարկման խորհրդին տալ նաև պայմանագիրը չեղյալ համարելու որոշում ընդունելու իրավասություն:

14. Ենթաօրենսդրությամբ ապահովել Օրենքի Հոդված 7-ի մաս 4-ով նախատեսված փոխկապակցված անձանց առկայության, ինչպես նաև Հոդված 33-ի մաս 6-ով սահմանված գնահատող հանձնաժողովի անդամի և մասնակցի միջև կապերի ստուգումը՝ ներգրավելով դրանում քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և լրատվամիջոցներին:

15. Արգելել (կամ չարգելելու դեպքում հրապարակավ հիմնավորել) տվյալ գնման գործընթացին այն ընկերության (ընկերությունների) մասնակցությունը, որոնց, Օ Հոդված 28-ի մաս 2-ի 2-րդ կետի բ/ ենթակետով սահմանված իրական սեփականատերերը հանդիսանում են պատվիրատուի աշխատակիցներ, փոխկապակցված են նրանց հետ կամ կապ ունեն նրանց հետ:

16. Օրենքի Հոդված 2-ում սահմանել "շահերի բախում" եզրույթը: Առաջարկում ենք դրա հետևյալ սահմանումը. "Սույն օրենքի իմաստով շահերի բախում է համարվում իրավիճակը, երբ գնահատող հանձնաժողովի կամ բողոքարկման խորհրդի անդամն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:" Այս եզրույթի սահմանման անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ ներկա դրությամբ շահերի բախումը հանրային ծառայության մասին օրենքով տարածվում է միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց (ԲՊԱ) վրա, և եթե այդ եզրույթը չսահմանվի Օրենքում, ապա կառաջանա խնդիր թե որն է շահերի բախումը գնահատման հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի ԲՊԱ չհանդիսացող անդամի դեպքում:

17. Օրենքով սահմանել, որ պայմանագրի կնքումը պարտադիր չէ, եթե կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի մեկ տասներորդը:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am

18. Օրենքով կամ ենթաօրենսդրությամբ ապահովել, որ պետական գնումների տեղեկագրում հրապարակվող փաստաթղթերի ֆորմատը լինի համակարգչով կարդացվելիք (machine-readable):

19. Օրենքով կամ ենթաօրենսդրությամբ ապահովել, որ պետական գնումների տեղեկագրում համակարգչով կարդացվելիք (machine-readable) ֆորմատով (որտեղ կիրառելի է) հրապարակվեն ա/ տեղեկատվություն ենթակալառուների մասին, բ/ գնման պայմանագրերը, գ/ պայմանագրերում կատարված փոփոխությունները, դ/ հանձն-ընդունման ակտերը, ե/ վճարման հանձնարարագրերը, զ/ տեղեկատվություն պատվիրատուի կողմից մատակարարված ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի ստուգման վերաբերյալ, եթե այդպիսին իրականացվել է, և է/ ներքին և արտաքին աուդիտի՝ պատվիրատուի գնումների մասով եզրակացությունները:

Հայաստան, Երևան, 0019, Անտառային փողոց, տուն 164/1,
Հեռ.՝ (374 10) 569589, 569689
Ֆաքս՝ (374 10) 569519
info@transparency.am • www.transparency.am